

Ա.

Ծ

Ի

Ա

Տ

Մ



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

ՔԱՂԱՔԱԿԱՆՔ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

Ա Շ Ի Ա Ր Հ Ա Պ Ա Տ Ո Ւ Մ.

Ձ Ի Ն Ա Ց Ի Ք.



Ջիսարհիս երեւելի ու զարմա-
նալի ազգերէն մէկն է Ձինաց
ազգը, որ Հնդկաստանցւոց
պէս Սեմայ ցեղին սերունդն է:
Երկու ապացոյց կայ Ձինացւոց
աշխարհիս երեսը ամենահին ազգ լի-
նելուն, որ է իրենց լեզուն ու յառա-
ջագիմութիւնը:

Ձինու հին պատմութիւնը անստոյգ ա-
ւանդութիւններէ ժողովուած է. Փան-Քու ա-
նունով առաջին արարածէն կոկոսի, ու չաս-
տուածներուն ցեղէն ծնած թագաւորին պատ-
մութիւններովը առաջ կերթայ: Իրենց ա-
ւանդութիւններուն նայելով՝ այն թագա-

ւորներն են ժողովրդեան կրակ վառել սով-
րեցընողները, նոյնպէս եւ տուն շինել, եր-
կրագործութիւն, արհեստ, եւ ուրիշ ասոնց
նման գիւտերը եւ բոլոր իրենց հարկաւոր
բաները սովրեցընողները: Թագաւորաց մէջ
երեւելիներն են Վազի ըսուածն ու հռչակա-
ւորն Վաս:

Ձիները հին ատենէն աշխատասէր ու
վարպետ երկրագործ էին եւ են. անոնց ար-
հեստաւորներուն շինած բաները՝ թէ ամրու-
թեամբ ու մաքրութեամբ, եւ թէ զարդե-
րուն գեղեցկութեամբը զարմանք կբերեն
ամենուն: Աստղաբաշխութեան, աշխարհա-
գրութեան ու ասոնց նման գիտութիւննե-

րու վրայ հազար տարիներով առաջ լաւ տեղեկութիւն ունին եղեր Ձիները. նոյնպէս հազար տարիներ առաջ շատ երեւելի ու օգտակար գիւտեր ըրած են: Յայտնի է՝ օրինակի համար՝ անոնց մեզմէ առաջ վառօդ շինելը, մագնիսին զօրութիւնը երկու հազար տարիի չափ առաջ գիտնալը ու հազարաւոր տարիներով առաջ արգեսեան ջրհորներ փորելը: Բայց զարմանքն այս է՝ որ չեն կրցած այն գիւտերը իրենց օգտին գործածել, այլ միշտ կէս ճամբան մնացեր են, ու ոչ երբէք ջնացեր են անոնց պտուղները որ չափ կարելի է աւելի քաղել, ինչպէս որ ուրիշ ազգեր կընեն: Նոյն պակասութիւնը կտեսնուինա եւ գիտութեանց ու արուեստից մէջ: Ձիները վաղուց գիտէին մետաղներու գործածութիւնը, քար տաշելն ու ոլորկելը, փայտեղէններ շինելը, բայց միշտ դէպի ծուռը գործածեր են այն գիտութիւնները, ու փոխանակ բնութեան օրինակին հետեւելու այն պարզ ձեւերը մէկգի ձգելով, բոլոր իրենց աշխատութիւնն ու ջանքը անոր հակառակն ընելու բանեցուցեր են: Այն անհամ ճաշակը կարծես թէ իրենց արեանը մէջ մտած է ու այնպէս տիրած է երեւակայութիւններուն վրայ որ մէջերէն մէկը սիրտ չընէր ետ կենալ նախնեաց օրինակին գերի պէս հետեւելէն: Ասոր համար է որ իրենց ծիծաղելի յամառութեամբը Ձիները մինչեւ ցայժմ ուղիղ խելքի եւ ընտիր ախորժակի դէմ կերթան ու անոր հակառակը կընեն: Դաւիթ մարգարէին տտենը՝ Ձիներուն երկիրը Քոն-ֆու-ցէ անունով թագաւորազն իշխանը կար. այն մարդուն բոլոր ջանքն էր իւր ժողովրդեան սովրեցընել թէ հաւատ ըսածդ մարդուս կենցաղավարութեանը մէջ ինչ կերպով պիտի բանեցուի, Բոլոր իւր կեանքը Քոն-ֆու-ցէ՝ իբրեւ ճշմարիտ եւ խղաղասէր փիլիսոփայ՝ մարդկանց վրայ մեծ սէր ունէր ու անոնց առաքինութեան ու իմաստութեան կանոններ կքարոզէր, մանաւանդ ամէն բանի մէջ պահեցու-

ղութիւն կսովրեցընէր: Ասով Քոն-ֆու-ցէն որ վարդապետութեան հաստատիչը եղաւ Ձիներուն մէջ: Անոր վարդապետութեան հետեւողներ շատ կան մինչեւ հիմա մէջերը, եւ գլխաւոր կանոններէն մէկ քանին ասոնք են.

«Մեք ամենքս եղբայր եմք ու պարտական եմք իրար սիրել ու օգնել միմեանց:

«Ընկերովդ հետ այնպէս վարուէ, ինչպէս դուն կուզես որ քեզ հետ վարուին ուրիշները:

«Բաղդաւոր մարդ տեսնես, փակէ աչքըդ. խեղճ մարդու պատահիս՝ բաց աչքերըդ:

«Հայրդ ու մայրդ պաշտէ. հոգա զանոնք անոնց ծերութեան ատեն. պակասութիւններուն այնպէս համբերէ, ինչպէս որ քուկիներուդ համբերեր են իրենք քու աղայութեանդ ատեն», եւ այլն:

Ձինաց լեզուն ըստ բառերը միավանկ են, այսինքն ամէն վանկ մէկ մէկ կատարեալ իմաստներ են. բառերը մէկ կամ երկու ձայնաւոր տառով կվերջանան: Լեզուն մէջ այն տեսակ միավանկ եւ արմատական բառեր 450 հատ են միայն. որով ըստ ինքեան հեշտ պիտի լինէր Ձինաց լեզուն սովրիլը, բայց այնպէս չէ, վասն զի իւրաքանչիւր արմատական բառ չորս նշանակութիւն փոխող շեշտեր ունի, որով բառերուն թիւը 1800 հատ կլինի: Գուլիէլմոս Հումպոլթ անուանի լեզուագէտը, Ձինաց լեզուն տրամաբանական ճշգրութեան օրինակ կըգնէ, այսինքն այնպէս շիտակ, ճիշդ եւ կանոնաւոր կերպով կկարգան ու կգրեն Ձիները, որ բառերուն յարաբերութիւնները անոնց նախագասութեան մէջ կեցած տեղերէն կիմացուին, կըսէ:

Ձինաց լեզուն շատ գաւառական բարբառներ ունի, ու հասարակ մարդիկ գրաբառ կամ կրթեալ լեզուով չեն խօսիր: Վերն որ ըսինք թէ Ձիները կանոնաւոր կերպով կկարգան ու կգրեն, այն յատկութիւնը գրաբառ կամ բարձր լեզուն համար էր, որ մանսւրիներու (Ձինաց իշխաններու) լեզու կըսուի: Այն

լեզուն ըստ մեծի մասին Ձինու Նանֆին ըս-
լած հին մայրաքաղաքը կգործածուի, ու բո-
լոր Ձինաց երկրին մէջ կրթեալ մարդկանց
լեզուն է, որով կխօսին ու գրեն:

Ձիներուն գրերը գիր չեն, նշանագիր են.
այսինքն ամէն բառի սեպհական նշաններ ու-
նին. օրինակի համար, արեգակին, լուս-
նին, ծառերուն համար զատ զատ նշաններ
ունին, որով այն բաները կիմացուին. այն-
պիսի արմատական նշաններ իրենց լեզուին
մէջ 609 հատ միայն կան. բայց երբոր այն
արմատական բառերէն դուրս իմաստ մը
ուզեն բացատրել, նոյն իսկ արմատական բա-
ռերուն նշանները զանազան կերպով կխառ-
նեն իրարու: Օրինակի համար, երբ արե-
գական ու լուսնի նշանները միաւորած լի-
նին, լոյս կնշանակէ. բերանի ու թռչնոյ
նշանները՝ երգ ըսել է. այս տեսակ պարզ
նշանները 740 են. բայց ասոնք գլխաւոր ի-
րեք դասն են միայն. իսկ իրենց բառարան-
ներուն մէջ ժողովուած բոլոր նշաններուն
թիւը քառասուն հազարի կհասնի, որով շատ
գոթուար եւ երկար ժամանակի կարօտ բան
է չիներէն գրել սովորիւր: Ձիները ոչ մեզի
պէս ձախ ձեռքէն դէպ ի աջ կգրեն, եւ ոչ
ճաճկաց պէս աջ ձեռքէն ձախ, հապա մէկ
նշանը միւսին տակ դնելով՝ վերէն գէպ ի
վար կգրեն:

Ձիներուն կերպարանքէն Սեմայ ցեղին հետ
Մողղներուն խառնուած լինելը յայտնի է.
երեսները լայն ուտափակ, վերի ծնօտները
գիմաց ելած, քիթերը փոքր ու լայն, աչ-
քերը նեղ ու գուրս գուրս, ու ծայրերը կուպ
տուած. գլխըներուն մազերն ու մօրուքները
սեւ ու հաստ, եւ երեսներուն գոյնը դեղին:
Էրիկ մարդիկ գլուխները կածիլեն ու փունջ
մը մազ միայն կթողուն վրան. որչափ երկար
լինի այն փունջը, այնչափ գեղեցիկ կերեւին
իրենց խելքովը. ուստի տէրութիւնը տուրք
գրած է մազերուն վրայ. որչափ մէկուն մա-
զը աւելի երկար լինի, այնչափ տուգանքը
մեծ է:

Էրիկ մարդոց հագուստը ըստ մեծի իմա-
սին կապոյտ, դեղին ու սեւ գունով է. հա-
րուսաներուն հագածը բարակ կտաւով մե-
տաքս է, իսկ հասարակ ժողովուրդինը չու-
խայ ու նանքա. իսկ կանանց հագուստը կար-
միր է եւ կամ կանաչ: Ձիները լայն վարաիք
կհագնին, վրայէն երկար ու լայն կապայ, ու
անոր վրայէն կարճ վերարկու. գլուխները
սրածայր յարգէ կամ աղնիւ եղեգէ գտակ
կըզնեն ու մէջքերը գօտի կկապեն, որոյ
վրայ կախուած կլինի սովորաբար իրենց մե-
տաքսէ քսակը, քիթախոտին տուփը, ճանճա-
վանը, թուրը, գաշոյնը եւ բարակ փղոսկր
մի՝ որ իրենք պատառաքաղի տեղ կգործա-
ծեն:

Ձինաց լուսաւորութիւնը կամ ուսումնա-
կան յառաջագիմութիւնը շատ հին է եւ
միանգամայն անփոփոխ, այսինքն շատ ա-
տենէ իվեր մի եւ նոյն աստիճանի մէջ ան-
շարժ կեցեր է, ու այժմ առաջ չերթար ա-
մենեւին, եւ նոր գիւտերն ու օգտակար նոր
բաները չեն ընդունիր՝ ասելով թէ իրենք
այն բաները վաղուց գիտեն, եւ թէ իրենց
արհեստներն ու սովորութիւնները ամենա-
կատարեալ են: Մէկ կողմանէ իրաւունք ունին
Ձիները. վասն զի շատ երեւելի գիւտեր ըրած
են իրենք. օրինակի համար մեզմէ շատ ա-
ռաջ, հին ատենէ իվեր, փայտէ տախտակ-
ներու վրայ տառեր փորագրելով՝ գրքեր ըս-
կոած են տպել, հազար տարիներէ իվեր վա-
ռօղ շինելը գիտեն, ու յախճապակէ աման-
ներ կշինեն. իսկ իրենց ահագին ջրանցքներն
ու ճամբաները, տաճարները, կամուրջները
ու բրգաձեւ աշտարակները՝ նոցա խորունկ
գիտութիւնն ու ճարտարութիւնը կհաստա-
տեն: Մասնաւոր ուշագրութեան արժանի է
նաեւ իրենց մեծ պարիսպը. անոր ստորագրու-
թիւնը թողումք Լորտ Մաքարթնէյ անգղիա-
ցւոյն, որ գեսպան գնացեր էր Ձինու երկի-
րը անցեալ դարուն վերջերը: Հետեւեալ
ստորագրութիւնը կընէ Լորտ Մաքարթնէյ.

«Ձիները հին ատենէ իվեր լուսաւորեալ

*

ազգէին. Ժողովուրդը միշտ աշխատութեան մէջ լինելով՝ տէրութիւնը ազատ զինուորներ կըռնէր, որպէս զի աշխատասէր գործաւորները պատերազմի ատեն չստիպուին բաները գործերը ձգելով՝ իրենց հայրենեաց պաշտպանութեան երթալու. որով պատերազմի ժամանակ անգամ արհեստները կըծաղկէին երկրին մէջ: Միջին Ասիոյ լեռնային ու բարձր տեղերը՝ վրանաբնակ Մողոլներուն երկիրներն էին: Կամաց կամաց անոր բնակիչները շատցան. եւ որովհետեւ Մողոլները վրանաբնակ լինելով՝ երկրագործութիւն չէին գիտեր, սովը շուտ մը տիրեց երկրին մէջ: Քաջ Մողոլները յուսահատութիւններէն՝ անհամար բազմութեամբ ելան իրենց երկրէն, ու նախ Եւրոպայի վրայ յարձըկեցան, ու Գաղղիոյ եւ Հիւսիսային Յունաստանի մէջ փռուելով՝ մինչեւ Իտալիա հասան: Բայց Հռովմայեցւոց Այետիոս զօրավարը իւր Վիզիգոթներովը, Շալոն գետին եզերքը իրենք օր սաստիկ պատերազմելով անոնց հետ, այնպէս ջարդ մը տուաւ նոցա որ սարսափած ետ քաշուեցան Մողոլք ու շատ դարեր չհամարձակեցան նորէն գէպ ի արեւմուտք դիմելու:

Մողոլները երբոր այն կողմէն յաջողութիւն չունեցան, Ձինու երկիրը դիմեցին, որ իրենց արեւելեան կողմը կիյնար. բայց հոն ալ ջարդեցին զանոնք Ձիները. որով Մողոլները Հնդկաստանի մէջ մտնել չկրնալով՝ անոր սահմաններուն վրայ սկսան յարձըկիլ ու չարաչար կողոպտել: Ամէն անգամին երբ որ կլսէին անոնց յարձակման պատրաստուիլը, սարսափի ու ահի դողի մէջ կլինէին: Վերջապէս այնպիսի անհանգստութեան չըգիմանալով՝ աշխատասէր Ձիները մտքերը դրին հսկայաձեւ պարիսպներով պաշտպանել իրենք զիրենք: Քրիստոսի թուականէն 240 տարի առաջ գործիքներն ուտերը առած՝ միլիոնաւոր աշխատաւորներ գէպի Ձինու սահմանը դիմեցին, ու սկսան երկու հազար վերսթ երկայնութեամբ բարձրաբերձ

սարերու ու ձորերու, խորունկ լճերու եւ արագընթաց գետերու վրայէ անցնելով ահագին պարիսպ մը շինել. բարձրութիւնը 40 ոտնաչափ, եւ լայնութիւնը՝ վերը 22 իսկ ստորոտը 45 ոտնաչափ: Բոլոր պարիսպը տաշած քարերով շինած է, ու ամէն մէկ հարիւր քայլ տեղը՝ 80 ոտնաչափ բարձրութեամբ աշտարակներ կանգնած են: Պարիսպը տեղ տեղ իրենք կարգ շինած է, ու իւրաքանչիւր դուռը զատ բերդ ունի: Սահմանին դրութեանը հետեւելով՝ պարիսպն ալ ոլոր ոլոր շինուած է, որով ահեղ է անոր տեսարանը եւ միանգամայն սքանչելի: Բոլոր աշխարհիս երեսը այն մեծագործ շէնքին նմանը չկայ: Այն պարիսպով Ձիները թէեւ Մողոլներուն արշաւանքէն ազատեցան, բայց չկրցան դերութենէ ազատիլ: Մինչեւ ցայժմ այն պարիսպն է որ բարբարոս Մողոլները լուսաւորեալ Ձիներէն կբաժնէ:

Ձինաց տուններուն դրսի տեսքը զարմանալի է, ինչպէս նաեւ այն հին ազգին ամէն բաները: Մինչեւ ցայժմ պահեր են իրենք տներուն վրանաձեւ ճարտարապետութիւնը, որ իրենց վրանաբնակ եղած ատեններէն մընացած է անշուշտ: Թագաւորին պալատէն մինչեւ գործաւորին տունը, փէքինի կռատունէն մինչեւ անբանից մսուրը՝ նոյն ձեւին հետեւողութիւն են: Տներուն անկիւններն ու տանիքները երբեմն տխրաձեւ խոշոր զարդերով կշինեն եւ երբեմն հրէշներու կերպարանքներ կձեւացնեն, որոց շատերը օձեր ու վիշապներ են: Ասոնք բոլորը փայլուն ու բաց գուններով ներկուած են սովորաբար. մանաւանդ սիրելի է իրենց կանաչ գոյնը՝ ոսկեզօծի հետ մէկտեղ: Դեղին գոյն ամենեւին չգործածուիր տներուն վրայ, բաց ի թագաւորին ու անոր իշխաններուն պալատներէն:

Ձինաստանի մէջ քրիստոնէութիւն քարոզող միսիոնարներուն մէկը՝ անոնց կերպէ գուրս ձեւացուցած կենդանիներն ու բոյսե-

րը գիտելով՝ զարմանալի, բայց միանգամայն խելացի կերպով բացատրութիւններ կընէ։ Նանքին մայրաքաղաքին հին շէնքերուն զարդարանաց մէջ գտնուած զանազան վիշապներուն ձեւերը կնամանցընէ ինքը այն ջրհեղեղէն առաջ եղած կենդանիներուն, որոց ոսկորները այժմ ասդիս անդին կգլտնուին. այն նմանութեան վրայ հիմնուելով միտիոնարը՝ կըսէ թէ «Չինները երեւակայութիւններէն հանած պիտի չլինին այն վերոյիշեալ ձեւերը, այլ բնութեան հետեւելով, ինչպէս նաեւ ուրիշ բաներու»։ Ուրեմն եթէ գեռ այն կենդանիները աշխարհիս երեսը եղած ատենը Չինացիք լուսաւորեալ ազգ էին, պէտք է կարծել որ իրենք իբրեւ ազգ՝ ջրհեղեղէն շատ առաջ կընակէին Չինաստանի մէջ։ Այս բանս կհաստատուի նաեւ Չիններուն մէջ մնացած՝ իրենց համար սուրբ՝ աւանդութիւնով՝ թէ քանի մի ընտանիք ջրհեղեղէն ազատուելով ու հետ զհետէ շատնալով բոլոր աշխարհ լեցուեցաւ։ Մովսէս մարգարէին սուրբ գրոց մէջ պատմածին պէս՝ Չինաց աւանդութիւնն ալ կըսէ թէ իրենց շինած մեծ նաւովը ազատեր են այն մարդիկը։ Երկու պատմութիւնն ալ այնպէս նման են իրարու որ մարդ կարծէ թէ փոխանակ արեւմտեան կողման, Ասիոյ արեւելեան կողմը բնակեր է նոյն նահապետը։

Գարէ ու փայտէ ծառ ձեւացուցած սիւները՝ լեցուն են այնպիսի զարդերով, որ այժմեաններուն չեն նմանիր ամենեւին. ընդ հակառակն աշխարհիս երեսէն վերցած բոյսերու ձեւեր են։ Կարելի է թէ Չինացիք այն բոյսերն իրենց աչքերուն դիմացն ունենալով՝ օրինակեր են զանոնք։

Չինաստան աշխարհիս ամէն երկիրներէն աւելի բազմամարդ երկիր է։ Եւրոպայի ճանապարհորդները, որ Չինաստանի ամէն կողմերը պտըտեր ու քննէր են, անոր ամէն մէկ քառակուսի մղոնին վրայ 300 հոգի բնակիչ հաշուեր են։ Գետերուն եղերքները, բարձր բլուրներն ու ընդարձակ դաշտերը

բոլորն ալ զարմանալի ճարտարութեամբ բանուած են։

Անտառները բոլորն ալ կտրած ոչնչացուցած են, եւ անոնց տեղը արտեր ու պարտէզներ շինած են։ Միայն բնութեան սաստիկ արգելքներ դրած տեղերն են որ անապատ ու մարգոց բնակութենէ զուրկ են։ Չինաստանի բնակչաց թիւը 400 միլիոն կհամարուի. բնական բան է որ այնպիսի սարսափելի բազմութիւնը կերակրելու համար վերջին աստիճանի կատարելագործուած պիտի լինի երկրագործութիւնը Չինաստանի մէջ։ Փորձով յայտնի է որ անտառները կըտրուած երկիրներու մէջ անձրեւ քիչ կուգայ, ու մինչեւ անգամ ահագին գետեր կհորանան բոլորովին։ Եան-ցէ-քեան ըսուած եւ ուրիշ ահագին գետերը, որ Չինու ցած երկիրներուն մէջէն կվազեն, իրենց ջրերուն առատութեամբն անգամ չէին կրնար անտառներուն պակասութեան վնասները լեցընել. գետերուն ու հեղեղատներուն ջրերն ու անձրեւային ջրերը շատ առատ էին. իսկ տափակ ու բարձր դաշտերը սաստիկ կարօտ էին ջրի։ Այն ջրի կարօտութեան պատճառան է որ բոլոր Չինաց երկիրը ջրանցքներով լեցուն է, եւ երկու նպատակի կծառայէ միանգամայն. մէկ կողմանէ դաշտերը կռռոգէ, ու միւս կողմանէ հաղորդակցութիւնը կդիւրացընէ. ջրանցքներուն մէջ շատ հին ատենէ իվեր շինուածները կան։ Խմելու ջուր ունենալու համար հազար տարիներէ իվեր սաստիկ խորութեամբ արդեսեան ջրհորներ կփորեն Չինացիք. որով կիմացուի թէ նոքա հազար տարիներով առաջ շատ յառաջադիմութիւն ունեցեր են գիտութեանց եւ արուեստից մէջ, եւ այնպիսի բաներ գիտեն եղեր որ Եւրոպայի մէջ անցեալ դարուն վերջերն ու այս դարուս մէջ միայն հնարուեցան։

Այն երեւելի ազգին վրայ տուած տեղեկութիւններս շնորհակալութեան մեծ տաճարին ստորագրութեամբը վերջացընեմ, որ

Ձինաստանի ամենէն երեւելի շէնքն է: Այն տաճարը շինողն է եռնկ-լօ անունով թագաւորը՝ Բրիստոսի թուականէն 680 տարի առաջ: Շէնքը փէքին քաղաքին քովն է: Գետնէն տասուերկու աստիճան բարձրութեամբ լայնատարած քարայտակ մը շինած է ու չորս դին անտաշ մարմարիոն վանդակով պատած: Այն յատակին վրայ հաստատուած է բուն տաճարը, որ 168 ոտնաչափ երկայնութեամբ ու 100 ոտնաչափ լայնութեամբ արահ մըն է, յատակը մարմարիոն փռած: Շէնքին երեսը սիւներով զարդարուած է: Տաճարին մէջի բոլոր փայտեղէնները ներկած ու ոսկեղօծ են: Սորա քովն է նաեւ անուանի յախճապակէ ութանկիւնի աշտարակը՝ քառասուն ոտնաչափ լայնութեամբ: Փայլուն տանիքը սիւներու վրայ հաստատուած է: Աշտարակն ինը յարկ ունի, եւ այն յարկերը մէկ մէկէ 3 ոտնաչափ պատուհաններուն տակէն դուրս ելած տանիքներուն ծայրերովը կը բաժնուին, քանի որ յարկերը կը բարձրանան, այնչափ այն տանիքներուն ծայրերը կ'արճընան: Վերի պատերուն հաստութիւնը $8\frac{1}{2}$ ոտնաչափ է, իսկ վարիններունը 12: Բոլոր աշտարակը ոսկեղօծ է ու դուրս ելած զարդերով վայելչացած: Վարի յարկին բարձրութիւնն է 20 ոտնաչափ, միւս յարկերունը քանի վեր ելնէ, այնչափ կ'ալիսի. իսկ բոլոր աշտարակին բարձրութիւնն է 200 ոտնաչափ: Տանիքին վրայ կայմ մը անկած է որ տանիքէն 30 ոտնաչափ վեր է: Կայմին վրայ երկաթէ թել փաթտած է, ու գագաթը մեծկակ ոսկեղօծ գունտ մը հաստատուած: Այս տեսակ աշտարակներ փէքինէն զատ Ձինու ուրիշ կողմերն ալ կ'գտնուին եւ շատ գեղեցիկ են:

Այս դարուս մէջ եւ մանաւանդ վերջին տեսներս եւրոպացւոց հետ յարաբերութիւններ սկսաւ ունենալ Ձինաց ազգը: Եւրոպացւոց տուած նեղութիւններուն չգիմանալով՝ Ձինացիք ընդդիմացան նոցա, ծի-

ծաղական ու տղայական կերպով պատերազմելով անոնց մահաբեր թնդանողներուն դէմ: Բայց որչափ տկար են պատերազմի մէջ, այնչափ ալ սաստիկ կ'ընդդիմանան եւրոպացւոցմէ սովորիլ անոնց լաւ բաները, եւ ամենեւին չեն ուզեր փոխել ոչ իրենց սովորութիւնները եւ ոչ քաղաքականութիւնը: Եթէ եւրոպացւոց Ձինացւոց դէմ ունեցած պատերազմին էութիւնը նայիմք, անիրաւութիւն է անոնց ըրածը: Ձինացիք ուրիշ ազգերէ բան մը չեն ուզեր, որովհետեւ բանի մը կարօտութիւն չունին. իրենք չեն ուզեր օտար ազգաց եւ մանաւանդ եւրոպացւոց հետ գործ ունենալ. վասն զի լաւ կ'հասկընան որ անոնց նպատակը շահասիրութիւն է եւ ժողովուրդը աւրել: Ձինաց խոհեմ տէրութիւնը՝ իւր ժողովրդեան վրայ հայրական խնամք տանելով, արգիլեց Անգղիացւոց աֆիոն ներս բերելը, բացարձակ հրաման տալով միանգամայն որ ուզածներուն չափ գնեն իրենցմէ՝ ոսկի եւ արծաթ վճարելով անոր համար: Բայց Անգղիացւոց ուզածը՝ փոխանակ ոսկոյ եւ արծաթի աֆիոն տալ էր նոցա. ուստի 1842-ին զէնքով սկսան պահանջել որ աֆիոնի առուտուրը չարգիլուի: Անգղիացիք հասան նպատակներուն: Ձինացիք յաղթուելով հարկադրեցան այն տեսն անոնց ուզած ազատութիւնը տալ, բայց այժմ նորէն սկսան դէմ կենալ Անգղիացւոց անիրաւ առուտուրին, նորէն պատերազմի ելան անոնց դէմ: Ձինաց Քանթոն ըսուած հարուստ քաղաքին մէկ մասը ռմբակոծելով կործանեցին Անգղիացիք: Պիտի կրնան արգեօք այս կերպով համոզուիլ Ձինացիք թէ ոչ, — ժամանակը կ'ցուցնէ. առ այժմ այս միայն կրնամք գուշակել թէ Ձինաց տէրութիւնը կրնայ խորտակիլ եւ ժողովուրդը յաղթուիլ, բայց ոչ երբէք իրեն յատկութիւնները պիտի փոխէ. վասն զի աւելի դիւրին է այն ազգին ջնջուիլը, քան թէ եւրոպացւոց օրինակին հետեւելով՝ անոնց նմանիլը: